ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2023 **թ. մայիսի 2**6-**ի** թիվ 13 հարցման կարգով արտահերթ նիստի

ՀՀ, ք. Երևան 26.05.2023 թ.

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ հարցման կարգով նիստի օրակարգում քվեարկության դրվեցին հետևյալ հարցերը.

1. «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» փոփոխություն կատարելու մասին,
2. «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում» փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին,
3. «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին,
4. 2023-2024 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին,
5. Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսման վարձի չափն ըստ դասարանների սահմանելու մասին:

Հարցման կարգով նիստին մասնակցեց ԵՊՀ գիտական խորհրդի 88 անդամներից 52-ը:

1.«**Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում» փոփոխություն կատարելու մասին**:

Որոշվեց.

հաստատել «**Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը**» (52 **կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ**):

2. «**ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում**» **փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին**:

Որոշվեց.

փոփոխություններ ու լրացումներ կատարել «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում» (52 **կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ**):

3.«ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» **փոփոխություններ կատարելու մասին:**

Որոշվեց.

փոփոխություններ ու լրացումներ կատարել «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» (52 **կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ**):

4. 2023-**2024 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին**:

Որոշվեց.

հաստատել 2023-**2024 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների** (52 **կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ**):

5. **Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի 2023**-2024 **ուսումնական տարվա ուսման վարձի չափն ըստ դասարանների սահմանելու մասին:**

Որոշվեց.

հաստատել ԵՊՀ ՍԹԵՄ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսման վարձի չափն ըստ դասարանների (52 **կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ**):

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան